Արձանագրության 3

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/93» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

07.08.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Նավասարդյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ավետիսյան /գնահատող/, Հ. Հարությունյան /գնահատող/,
Բ. Տեր-Թովմասյան /բացող/
Բացակայում է՝ Հ. Երգենյան /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Գ. Նավասարդյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

1.2 «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/93» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Նավասարդյան)

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Բավարար

- Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/93» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Գ. Նավասարդյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/93» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Երևաննախագիծ» ՓԲԸ–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Նավասարդյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- ***Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասում, Նուբարաշեն խճուղու հարևանությամբ և Սարալանջի փարածքում անտառ պաշտպանիչ գոտու ստեղծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների*** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին :

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Նավասարդյան

Անդամներ՝ ---------- Գ. Ավետիսյան

---------- Հ. Հարությունյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան